

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2018թ. հունվարի 9-ի նիստի

(արձ. N7)

1. Կառավարման խորհրդին ներկայացվող տարեկան հաշվետվությունը ամբողջացնելու նպատակով հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին մեկշաբաթյա ժամկետում առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացնել 2017թ. ընթացքում՝

1.1 արտերկրից ժամանած մասնագետների կողմից ինստիտուտում անցկացված վարպետության դասերի վերաբերյալ,

1.2 արտերկրում և ՀՀ-ում կայացած միջազգային գիտաժողովներին ինստիտուտի դասախոսների մասնակցության, դասախոսների կողմից հրատարակած գրքերի վերաբերյալ,

1.3 հանրապետական և միջազգային փառատոներին ուսանողների մասնակցության և ստացած մրցանակների, դիպլոմների վերաբերյալ:

1.4 Հանձնարարել ՈԻԽ նախագահին եռօրյա ժամկետում ներկայացնել ՈԻԽ 2017թ. հաշվետվությունը:

1.5 Հանձնարարել գլխավոր հաշվապահին 2017թ. Ֆինանսատնտեսական մասի զեկույցում ներառել նաև ինստիտուտի 2018թ. մարտահրավերները:

1.6 Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել պրոռեկտորներին:

2. Հանձնարարել ՈԱԿ-ին մինչև ս.թ. հունվարի 16-ը ավարտել ԵԹԿՊԻ-ի 2018-2022թթ. ռազմավարական ծրագրի մշակումը և նախագիծը ներկայացնել ԳԽ քննարկմանը:

3. Բեմադրական նախագծերի մրցույթի ընթացքի վերաբերյալ Է. Բարսեղյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

3.1 հանձնարարել Է. Բարսեղյանին փոփոխել հայտարարության բովանդակությունը. հայտերի ընդունելության ժամկետը երկարաձգել մինչև ս.թ. հունվարի 31-ը և թույլատրել վերջին 5 տարում ավարտած շրջանավարտներին մասնակցելու հայտարարված մրցույթին:

4. Ս.թ. փետրվար ամսին կազմակերպել այցելություններ գործամասեր,

4.1 հանձնարարել է. Բարսեղյանին նախապատրաստել անհրաժեշտ տեղեկատվական նյութեր՝ զորամասերում ներկայացնելու ինստիտուտի առօրյան և մասնագիտական ուղղվածությունները,

4.2 ինստիտուտի վերաբերյալ առավել ընդգրկուն տեղեկատվություն ներկայացնելու նպատակով վերախմբագրել, 100 օրինակով տպագրել և զորամասերում տարածել ինստիտուտի բուկլետը:

4.3 Ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժնի աշխատանքների մասին պրոռեկտոր Հ. Ավագյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

4.4 Ինստիտուտի ֆինանսատնտեսական առկա իրավիճակի վերաբերյալ գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

4.5 Հանձնարարել պրոռեկտոր Ն. Սարգսյանին և ֆակուլտետների ղեկաններին աշխատանքային խմբով քննարկել «Պարարվեստ» մասնագիտությանը հատկացվող անվճար և վճարովի տեղերի բաշխման հարցը և ներկայացնել ԳԽ քննարկմանը:

4.6 Հանձնարարել Կինոյի և հեռուստատեսության, Մեներգի և բեմական շարժման ամբիոնների վարիչներ Գագիկ Ստեփանյանին և Արմեն Մելիքսեթյանին ներկայացնել բացատրագրեր Էդգար Բաղդասարյանի և Ռիմա Պիպոյանի բացակայությունների վերաբերյալ:

Գլխարարտուղար

Գ.Հովհաննիսյան